

## СТАВКИ

за подачу или уборку вагонов локомотивом, принадлежащим ЗАО "ЮКЖД" на места общего и необщего пользования, на 1 вагон в драмах без НДС

расстояние											
Одновременная подача/уборка, кол-во вагонов	до 0,5 км	свыше 0,5 - до 1 км	свыше 1 - до 1,5 км	свыше 1,5 - до 2 км	свыше 2 - до 2,5 км	свыше 2,5 - до 3 км	свыше 3- до 3,5 км	свыше 3,5 - до 4 км	свыше 4 - до 4,5 км	свыше 4,5 - до 5 км	свыше 5 км за каждые 2,5 км
1	5 221	6 875	8 640	10 410	12 155	13 956	16 184	17 521	19 463	21 594	11 445
2	4 060	5 231	6 439	7 743	8 974	10 250	11 728	12 662	14 004	15 510	8 220
3	3 419	4 368	5 302	6 278	7 271	8 262	9 321	10 069	11 134	12 229	6 481
4	2 886	3 656	4 429	5 201	5 972	6 744	7 517	8 289	9 062	9 832	5 211
5	2 476	3 090	3 710	4 328	4 946	5 562	6 180	6 798	7 415	8 033	4 257
6	2 201	2 713	3 229	3 744	4 259	4 773	5 288	5 803	6 316	6 832	3 621
7	2 006	2 445	2 888	3 329	3 771	4 211	4 652	5 094	5 534	5 975	3 167
8	1 859	2 243	2 631	3 017	3 403	3 788	4 175	4 561	4 946	5 332	2 826
9	1 746	2 088	2 432	2 775	3 119	3 461	3 804	4 148	4 490	4 834	2 562
10	1 639	1 954	2 255	2 570	2 889	3 198	3 507	3 816	4 124	4 433	2 349
11	1 544	1 833	2 115	2 396	2 677	2 957	3 238	3 519	3 799	4 080	2 162
12	1 470	1 727	1 985	2 243	2 500	2 757	3 015	3 272	3 529	3 786	2 007
13	1 400	1 637	1 876	2 113	2 351	2 588	2 826	3 064	3 301	3 538	1 875
14	1 340	1 560	1 781	2 002	2 222	2 443	2 663	2 884	3 104	3 325	1 762
15	1 287	1 492	1 699	1 905	2 111	2 316	2 522	2 728	2 934	3 140	1 664
16	1 241	1 434	1 627	1 820	2 013	2 206	2 399	2 592	2 785	2 978	1 578
17	1 200	1 382	1 564	1 746	1 927	2 109	2 290	2 472	2 653	2 835	1 503
18	1 164	1 335	1 508	1 679	1 851	2 022	2 194	2 365	2 537	2 708	1 435
19	1 132	1 294	1 457	1 620	1 782	1 945	2 107	2 270	2 432	2 595	1 375
20 и более	1 103	1 257	1 412	1 566	1 721	1 875	2 029	2 184	2 338	2 493	1 321

«ՀԱՐԱՎԿՈՎԿԱՍՅԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ» ՓԲԸ

Հաստատված է  
«Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ  
գլխավոր տնօրենի  
16.12.2024թ. №304/Ն հրամանով

ՍԱԿԱԳՆԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

«Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ  
2025թ. ֆրախտային տարվա  
երկաթուղային տրանսպորտով բեռների փոխադրման

ք.Երևան  
2025 թ.

## Բովանդակություն

<b>Բաժին 1.....</b>	<b>43</b>
Տերմիններ և հասկացություններ.....	43
Ընդհանուր դրույթներ .....	45
<b>Բաժին 2.....</b>	<b>53</b>
Բեռների փոխադրման սակագնային դրույթների և փոխադրավճարների հաշվարկի կարգ.....	53
<b>Բաժին 3. ....</b>	<b>58</b>
Ծավալային սակագների շտկիչ գործակիցներ.....	58
<b>Բաժին 4. ....</b>	<b>59</b>
<b>Լրացուցիչ գանձումներ.....</b>	<b>59</b>
Հավելված №1 Համաալիտանի վագոններով բեռների փոխադրման սակագնային դրույթաչափեր .....	60
Հավելված №2 Գլանատակառով բեռների փոխադրման սակագնային դրույթաչափեր .....	62
Հավելված №3 Միջազգային հաղորդակցությունում մասնագիտացված վագոնով արագ փչացող բեռների փոխադրման սակագնային դրույթաչափեր .....	63
Հավելված №4 Բեռնված և դատարկ բեռնարկղերի փոխադրման սակագնային դրույթաչափեր ..	64
Հավելված №5 «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ բեռնային կայարանների միջև հեռավորությունները .....	65
Հավելված №6 Միջազգային հաղորդակցությունում բեռի ներդաշնակ անվանացանկի /ԲՆԱ/ և նվազագույն քաշային չափանիշների ցանկ .....	66
Հավելված №7 Ներքին հաղորդակցությունում բեռի ներդաշնակ անվանացանկի /ԲՆԱ/ և նվազագույն քաշային չափանիշների ցանկ .....	68
Հավելված №8. Վտանգավոր բեռների ցանկ .....	71
Հավելված №9 «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ բեռնային գործառնությունների կատարման համար բաց կայարանների այբբենական ցանկ .....	73
Հավելված №10. «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ բեռնային կայարանների ցանկը, որոնց կցված են մանրային ջերմաքարշեր .....	74
Հավելված №11. «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ կողմից իրականացվող գանձումների, մատուցվող աշխատանքների և ծառայությունների Գնացուցակ .....	75
Հավելված №12 Դրույթներ՝ «ՀԿԵ» ՓԲԸ-ին պատկանող ջերմաքարշով վագոնների մատուցման և հավաքման ընդհանուր և ոչ ընդհանուր օգտագործման վայրերում. ....	88

# ՍԱԿԱԳՆԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

«Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ

2025թ. ֆրախտային տարվա

երկաթուղային տրանսպորտով բեռների փոխադրման

«Հարավկովկասյան երկաթուղի» փակ բաժնետիրական ընկերության («ՀԿԵ» ՓԲԸ) 2025թ. ֆրախտային տարվա երկաթուղային տրանսպորտով բեռների փոխադրման սակագնային քաղաքականությունը (այսուհետ՝ Սակագնային Քաղաքականություն) սահմանում է փոխադրման դրույքները, լրացուցիչ գանձումների դրույքները և դրանց կիրառման կանոնները «ՀԿԵ» ՓԲԸ-ով բեռների փոխադրման ժամանակ և գործում է 2025թ. հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ներառյալ:

Սակագնային քաղաքականությունը մշակվել է ԱՊՀ պետությունների երկաթուղիների՝ միջազգային հաղորդակցությունում բեռների փոխադրման Սակագնային Քաղաքականության կիրառման սկզբունքներին համապատասխան, որոնք սահմանվել են ԱՊՀ պետությունների երկաթուղային տրանսպորտի համաձայնեցված Սակագնային Քաղաքականություն /այսուհետ՝ ԱՊՀ ՍՔ/ սահմանելու Հայեցակարգով: Այդ Հայեցակարգի մասին որոշումն ընդունվել է 1996թ. հոկտեմբերի 18-ին ԱՊՀ պետությունների կառավարությունների Ղեկավարների Խորհրդի կողմից և հիմնվում է ԱՊՀ պետությունների Երկաթուղային վարչությունների (Երկաթուղիների) 1993թ. փետրվարի 17-ի Սակագնային Համաձայնագրի վրա: Սակագնային քաղաքականությունը հիմնված է երկաթուղային տրանսպորտին վերաբերող մասով գործող միջազգային պայմանագրերի և համաձայնագրերի, Հայաստանի Հանրապետության օրենսդրության, ինչպես նաև այլ նորմատիվաիրավական ակտերի վրա:

## Բաժին 1.

### Տերմիններ և հասկացություններ

Սակագնային քաղաքականության մեջ ներքոհիշյալ տերմինները օգտագործվում են հետևյալ նշանակությամբ.

- **գույքային համակազմի վագոններ (պատկանող փոխադրողին)** – երկաթուղային վարչություններին (Երկաթուղիներին) պատկանող՝ ԱՊՀ մասնակից երկրներին, Ադրբեջանի Հանրապետությանը, Վրաստանի Հանրապետությանը, Լատվիայի Հանրապետությանը, Լիտվիայի Հանրապետությանը, Էստոնիայի Հանրապետությանը պատկանող բեռնատար վագոնների և բեռնարկղերի համատեղ օգտագործման առ 12.03.1993թ Համաձայնագրի մասնակիցների սեփականություն հանդիսացող բեռնատար վագոններ, ինչպես նաև

փոխադրողի վագոններ, որոնք օգտագործվում են «Միջազգային հաղորդակցությունում բեռնատար վագոններից օգտվելու կանոնների մասին» Պայմանագրի համաձայն (ԲՎԿ):

- **մասնավոր համակազմի վագոններ (փոխադրողին չպատկանող)** – սեփականության իրավունքով կամ այլ իրավական հիմքով ֆիզիկական կամ իրավաբանական անձին պատկանող բեռնատար վագոններ, Բեռնատար վագոնների համակազմի տվյալների ավտոմատացված բանկում /ՎՀՏ ԱԲ/ սեփականության համապատասխան հատկանիշով գրանցված 1520մմ տրամաչափի բեռնատար վագոններ:
- **գույքային համակազմի համապիտանի բեռնարկղ** – երկաթուղային վարչություններին (Երկաթուղիներին)՝ ԱՊՀ մասնակից երկրներին, Ադրբեյջանի Հանրապետությանը, Վրաստանի Հանրապետությանը, Լատվիայի Հանրապետությանը, Լիտվիայի Հանրապետությանը, Էստոնիայի Հանրապետությանը պատկանող բեռնատար վագոնների և բեռնարկղերի համատեղ օգտագործման Համաձայնագրի մասնակիցներին պատկանող բեռնարկղ:
- **մասնավոր բեռնարկղ** - ԱՊՀ մասնակից երկրների երկաթուղային վարչություններին (Երկաթուղիներին), Վրաստանին, Լատվիայի Հանրապետությանը, Լիտվիայի Հանրապետությանը, Էստոնիայի Հանրապետությանը չպատկանող բեռնարկղ, որը ունի համարակալման ընդունված համակարգին կամ միջազգային ստանդարտին համապատասխան մակնշման ծածկագիր:

Երկաթուղային բեռնափոխադրումները Հայաստանի Հանրապետության տարածքով.

### **Միջազգային հաղորդակցությունում**

- բեռնափոխադրումներ այն պետություններ/-ից/, որոնց Երկաթուղային վարչությունները (Երկաթուղիները) հանդիսանում են Սակագնային Համաձայնագրի մասնակից՝ ինչպես նաև բեռնափոխադրումներ երրորդ երկրներ/-ից/: Երրորդ երկրներն են համարվում այն պետությունները, որոնց երկաթուղիները չեն հանդիսանում Սակագնային Համաձայնագրի մասնակից,
- Սակագնային Համաձայնագրի մասնակից Երկաթուղային վարչությունների (Երկաթուղիների) կայարանների միջև բեռնափոխադրումներ:
- Սակագնային Համաձայնագրի մասնակիցների երկաթուղային գծերով բեռների տարանցիկ փոխադրում երրորդ երկրներից դեպի երրորդ երկրներ: Երրորդ երկրներն են

համարվում այն պետությունները, որոնց Երկաթուղային վարչությունները (Երկաթուղիները) չեն հանդիսանում Սակագնային Համաձայնագրի մասնակից:

### **Ներհանրապետական հաղորդակցությունում**

- «ՀԿԵ» ՓԲԸ -ի կայարանների միջև բեռների փոխադրումներ:

## **Ընդհանուր դրույթներ**

1.1. Սակագնային Քաղաքականության դրույթները և Սակագնային Քաղաքականությամբ սահմանված փոխադրման դրույթները և լրացուցիչ գանձումների դրույթները կիրառվում են միջազգային և ներհանրապետական հաղորդակցություններում «ՀԿԵ» ՓԲԸ-ի երկաթուղային գծերով բեռնափոխադրումների ժամանակ:

1.2. Բեռնափոխադրումների սույն Սակագնային Քաղաքականության դրույթները չեն ներառում՝

ա) լրացուցիչ գանձումները, այդ թվում սկզբնական և վերջնական գործառույթների համար, որոնք հաշվարկվում են սույն Սակագնային Քաղաքականության թիվ 11 հավելվածին համապատասխան,

բ) ավելացված արժեքի հարկը, որի հաշվարկը կատարվում է համաձայն Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրության:

1.3. Սույն Սակագնային Քաղաքականությամբ չնախատեսված բեռների փոխադրումների դեպքում «ՀԿԵ» ՓԲԸ-ն սահմանում է փոխադրման պայմանները առանձին պայմանագրերով:

1.4. «ՀԿԵ» ՓԲԸ-ն, ելնելով իր տնտեսական շահերից, իրավունք ունի ինքնուրույն փոփոխել ֆրախտային տարվա ընթացքում հարավկովկասյան երկաթուղային գծերով բեռների փոխադրումների դիմաց սույն Սակագնային Քաղաքականության լրացուցիչ գանձումների դրույթների և փոխադրման դրույթների մակարդակը և սահմանել դրանց կիրառման կանոնները, կարգը և պայմանները:

1.5. Փոխադրումների դրույթների և լրացուցիչ գանձումների մակարդակի փոփոխման դեպքում «ՀԿԵ» ՓԲԸ-ն իրազեկում է մասնակիցներին համապատասխան փոփոխությունը ուժի մեջ մտնելուց ոչ ուշ, քան 15 օր առաջ:

1.6. Փոխադրավճարների հաշվարկն իրականացվում է շվեյցարական ֆրանկով: Սակագնային Քաղաքականության դրույթների վերահաշվարկի ժամանակ շվեյցարական ֆրանկով հաշվարկված դրույթները բաժանվում են վերահաշվարկի գործակցին, որը սահմանված է ԱՄՆ դոլարի նկատմամբ շվեյցարական ֆրանկի միջին հարաբերակցությամբ՝ ըստ դրան նախորդող վերջին 3 ամիսների Շվեյցարիայի Ազգային բանկի տվյալների: ԱՄՆ դոլարով շվեյցարական ֆրանկի վերահաշվարկի գործակիցը

հայտարարվում է կենտրոնացված կարգով Սակագնային Քաղաքականության Գործերի կառավարման վարչության կողմից՝ յուրաքանչյուր եռամսյակի առաջին օրը, ոչ ուշ քան մեկ ամիս առաջ նախքան ուժի մեջ մտնելը:

1.7. Բեռնափոխադրումների վճարումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության ազգային արժույթով՝ դրամով:

Փոխադրման արժեքը դրամով հաշվարկվում է ՀԿԵ ՓԲԸ-ի կողմից սահմանված ԱՄՆ դոլարի փոխարժեքով՝ ՀՀ 2025 թվականի պետական բյուջեով հաստատված ԱՄՆ դոլարի նկատմամբ դրամի փոխարժեքի հիման վրա /2025 թվ.-ին՝ 387,17 դրամ/ԱՄՆ դոլլ//:

Սույն ՍՔ 1.15.3, 2.13-2.15 /ներառյալ/ կետերում նկարագրված բեռնափոխադրումների համար փոխադրման արժեքի հաշվարկը դրամով կատարվում է Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի կողմից բեռի ընդունմանը նախորդող օրվա ԱՄՆ դոլարի փոխարժեքով՝ համաձայն մեկնման կայարանի դրոշմակնիքի:

1.8. Բեռների փոխադրավարձը հաշվարկվում է երկաթուղային բեռնագրում ուղարկման կայարանի կողմից դրոշմանշված օրվա դրությամբ գործող սակագներով:

1.9. Միջազգային և ներհանրապետական հաղորդակցություններում բեռների փոխադրման դիմաց հաշվարկներն իրականացվում են «ՀԿԵ» ՓԲԸ-ի հետ պայմանագրի առկայության դեպքում:

1.10. «ՀԿԵ» ՓԲԸ բեռնային կայարանների միջև սակագնային հեռավորությունները սահմանվում են համաձայն Հավելված №5: Այրում սահմանային կայարանից միջազգային հաղորդակցության փոխադրումների դեպքում՝ Հավելված №5-ում նշված սակագնային հեռավորությունները ավելանում են 4 կմ-ով:

1.11. Փոխադրման նվազագույն սակագնային հեռավորությունը կազմում է 50 կմ: Այն դեպքում, երբ փոխադրման փաստացի հեռավորությունը 50 կմ-ից պակաս է, վճարը հաշվարկվում է 50 կմ-ի սակագնով:

1.12. Բեռների վագոնային, խմբային և երթուղային փոխադրումների դեպքում վճարը հաշվարկվում է վագոնում յուրաքանչյուր տոննայի դիմաց (հաշվարկային զանգվածի միավոր): Ընդ որում 500 կգ և ավելին կլորացվում է մինչև լրիվ տոննա, իսկ 500 կգ-ից պակաս զանգվածը հաշվի չի առնվում:

1.13. Բեռների փոխադրման ժամանակ, առաքման հաշվարկային զանգված է հանդիսանում լրիվ տոննաներով կլորացված առաքման իրական զանգվածը, բայց ոչ պակաս քան 10 տոննա: Բացառություն են կազմում Հավելված №6 և Հավելված №7-ում նշված բեռները, որոնց առաքման զանգվածը սահմանվում է՝ հաշվի առնելով վագոնի բեռման նվազագույն քաշային նորմաները:

Վագոնի նվազագույն քաշային նորմայից ավել բեռնման դեպքում փոխադրման հաշվարկային ծավալը հանդիսանում է բեռի իրական քաշը, ամբողջացված մինչև լրիվ տոննաների:

1.14. Տարբեր անվանումների բեռների վագոնային փոխադրում:

Տարբեր անվանումների բեռներ են համարվում Բեռների ներդաշնակ անվանացուցակի (ԲՆԱ) տարբեր տեսակներին վերաբերվող բեռները:

Համապիտանի վագոններով տարբեր անվանումների բեռներից բաղկացած փոխադրման փոխադրավճարը հաշվարկվում է Հավելված №1 սակագնային դրույքների հիման վրա, ընդ որում, տարբեր նվազագույն քաշային նորմաներ ունեցող բեռների մասով հաշվարկվում է փոխադրման ընդհանուր քաշի դիմաց, սակայն ոչ պակաս, քան փոխադրման կազմում ամենամեծ քաշն ունեցող բեռի նվազագույն քաշային նորման: Ամենամեծ քաշ ունեցող բեռ է համարվում առանձին անվանումների կամ տարբեր անվանումների բեռները, որոնց համար սահմանված են միևնույն նվազագույն քաշային նորմեր: Եթե փոխադրման կազմում բոլոր բեռները ունեն միևնույն քաշը, ապա վճարի հաշվարկը իրականացվում է փոխադրման ընդհանուր ծավալի դիմաց, բայց ոչ պակաս, քան առավելագույն մեծություն ունեցող նվազագույն քաշային նորմայի դիմաց:

Եթե յուրաքանչյուր անվանման համար բեռի քաշը առանձին չի նշված, ապա փոխադրավճարի հաշվարկը իրականացվում է առավելագույն սակագնային դրույքով փոխադրվող բեռի դրույքով:

1.15. Բեռնված և դատարկ բեռնարկղերի փոխադրում

1.15.1. Գույքային համակազմի բեռնված կամ դատարկ համապիտանի բեռնարկղերի փոխադրավարձը հաշվարկվում է Հավելված №4-ի թիվ 1 Աղյուսակի դրույքներով:

1.15.2. Բեռնված և դատարկ մասնավոր համապիտանի բեռնարկղերի փոխադրավարձը հաշվարկվում է Հավելված №4-ի թիվ 2 Աղյուսակի դրույքներով:

1.15.3. Ուղիղ արագընթաց գնացքների կազմում բեռնված և դատարկ համապիտանի բեռնարկղերի փոխադրավարձը՝ անկախ սեփականության տեսակից, հաշվարկվում է Հավելված №4-ի թիվ 3 Աղյուսակի դրույքներով:

1.15.4. Դատարկ և բեռնված մասնավոր բեռնարկղ-գլանատակառների (տանկ-բեռնարկղ) փոխադրման համար վճարը հաշվարկվում է Հավելված №4-ի դրույքներով՝ համաձայն բեռնարկղի պատկանելիության՝ կիրառելով 1,40 գործակիցը:

ԲՆԱ 2009, 2204, 2205, 2206 անվանացուցակային խմբերի բեռներով բեռնված բեռնարկղ-գլանատակառների (տանկ-բեռնարկղերի) փոխադրման համար վճարը հաշվարկվում է Հավելված №4-ի դրույքներով՝ բեռնարկղի պատկանելիությանը համաձայն՝ կիրառելով 1,30 գործակիցը:

1.15.5. Բեռնված և դատարկ մասնավոր սառնարանային բեռնարկղերի փոխադրման համար վճարը հաշվարկվում է Հավելված №4-ի դրույքներով՝ բեռնարկղի պատկանելիությանը համաձայն՝ կիրառելով 1,35 գործակիցը:

1.15.6. Մասնավոր (փոխադրողին չպատկանող) դիզել-էլեկտրակայան վագոնի փոխադրման համար դատարկ և բեռնված երթուղում վճարը հաշվարկվում է 1 առանցք-կմ դիմաց 0,12 շվ. ֆր. դրույքով:

1.15.7. Մասնավոր (փոխադրողին չպատկանող) վագոնով բեռնարկղերի (անկախ սեփականության պատկանելությունից) փոխադրավարձը հաշվարկվում է սույն կետի կանոններով՝ կիրառելով 0,85 գործակիցը:

1.15.8. Մինչև 50 կմ ներառյալ հեռավորության վրա բեռնված կամ դատարկ բեռնարկղի փոխադրավարձը հաշվարկվում է սույն կետի կանոններով՝ կիրառելով 2,0 գործակիցը: 50 կմ-ից ավել մինչև 100 կմ ներառյալ հեռավորության համար կիրառվում է 1,4 գործակիցը:

1.15.9. Բեռնված և դատարկ բեռնարկղի տեղափոխման վճարը, որի պարամետրերը չեն համապատասխանում միջազգային համաձայնագրերին, ստանդարտներին և տեխնիկական կանոնակարգերին, որոնք կարգավորում են դրանց պարամետրերը և թույլատրելիությունը երկաթուղային տրանսպորտով միջազգային բեռնափոխադրումների իրականացման համար, սահմանվում է առանձին պայմանագրով:

1.16. Բեռնափոխադրում բեռնափոխադրահարմարանքով

1.16.1. Բեռնափոխադրահարմարանքներով, ինչպես նաև տեղադրվող կամ տեղահանվող սարքավորումներով համալրված վագոններով բեռնափոխադրման դեպքում, եթե նրա զանգվածը հաշվարկված չէ վագոնի տարայի մեջ՝ փոխադրավարձը հաշվարկվում է բեռի հաշվարկային զանգվածի և բեռնափոխադրահարմարանքների, տեղադրվող կամ տեղահանվող սարքավորումների զանգվածի դիմաց, սույն Սակագնային Քաղաքականության 2.1 կետի կանոններին համապատասխան:

1.16.2. Բեռնափոխադրահարմարանքների, այդ թվում նաև Սակագնային համաձայնագրի մասնակից Երկաթուղային վարչություններին (Երկաթուղիներին) պատկանող տեղադրվող սարքավորումների վերադարձն իրականացվում է առանց փոխադրավարձի գանձման: Եթե նման փոխադրումն իրականացվում է մասնավոր (փոխադրողին չպատկանող) վագոններով, բացի տրանսպարտյորից գանձվում է վճար վագոնի փոխադրման համար՝ 1 առանցք-կմ դիմաց 0,10 շվ. ֆր. դրույքով:

1.16.3. Բեռների բեռնաթափումից հետո վերադարձվող Երկաթուղային վարչություններին (Երկաթուղիներին) չպատկանող բեռների բեռնափոխադրահարմարանքների (ԲՆԱ ծածկագիր՝ 99040000) փոխադրման դիմաց վճարը հաշվարկվում է սույն Սակագնային Քաղաքականության 2.1 կետի կանոններով՝ սարքավորումների հաշվարկային զանգվածի դիմաց, բայց ոչ պակաս, քան 10 տոննա:

1.16.4. Չտեղահանվող սարքավորումներով մասնավոր (փոխադրողին չպատկանող) վագոնը բեռնաթափումից վերադարձնելու և բարձման ուղարկելու փոխադրավարձը, որոնց զանգվածը ներառված չէ վագոնի տարայի զանգվածում, հաշվարկվում է 1 առանցք-կմ դիմաց 0,12 շվ. ֆր. դրույքով:

1.17. Բեռնատար գնացքի կազմում 4-, 6- և 8-առանցքային փոխակրիչներով եզրաչափքային բեռների փոխադրման համար վճարը հաշվարկվում է սույն Սակագնային Քաղաքականության 2.1 կետի համաձայն՝ առաքման մեկ հաշվարկային զանգվածի դիմաց, բայց ոչ պակաս, քան 5 տոննայի դիմաց՝ փոխակրիչի յուրաքանչյուր առանցքի համար /այսինքն՝ 20 տոննա՝ 4-առանցքային փոխակրիչի համար, 30 տոննա՝ 6-առանցքային փոխակրիչի համար, 40 տոննա՝ 8-առանցքային փոխակրիչի համար/:

1.18. Ոչ եզրաչափքային /արտաչափային/ և երկարաչափ բեռների, փոխակրիչի և սցեպ վագոնների վրա տեղափոխվող բեռների փոխադրում:

Արտաչափային բեռները դասակարգված են համաձայն ԱՊՀ մասնակից-պետությունների, Լատվիայի Հանրապետության, Լիտվայի Հանրապետության, Էստոնիայի Հանրապետության երկաթուղիներով արտաչափային և ծանրաքաշ բեռների փոխադրման Հրահանգի, որը հաստատվել է 2001 թվականի հոկտեմբերի 19-ին կայացած Համագործակցության մասնակից-պետությունների երկաթուղային տրանսպորտի Խորհրդի 30-րդ նիստում, և դրանց փոխադրման համար վճարը հաշվարկվում է՝

1.18.1. Բեռնատար գնացքի կազմում ոչ եզրաչափքային ստորին՝ 1-2, կողային՝ 1-3 և վերին՝ 1-2 կարգ ունեցող ոչ եզրաչափքային բեռների 4-առանցքային պլատֆորմով և կիսավագոնով փոխադրման ժամանակ փոխադրավարձը հաշվարկվում է համաձայն սույն Սակագնային Քաղաքականության 2.1 կետի, բայց ոչ պակաս քան 25 տոննայի համար:

1.18.2. Բեռնատար գնացքի կազմում ոչ եզրաչափքային ավելի մեծ կարգ ունեցող բեռների դեպքում, քան նշված է սույն Սակագնային Քաղաքականության 1.18.1. կետում (բացառությամբ ոչ եզրաչափքային 6 կարգի կողային և ստորին, ոչ եզրաչափքային 3-ից բարձր կարգի վերին և գերեզրաչափքային բեռների) 4-առանցքային պլատֆորմով և կիսավագոնով բեռնային գնացքի կազմում փոխադրման ժամանակ, փոխադրավարձը հաշվարկվում է սույն Սակագնային Քաղաքականության 2.1 կետի համաձայն, առաքման հաշվարկային զանգվածի դիմաց, բայց ոչ պակաս, քան՝ 10 տոննայի համար, կիրառելով 3,0 գործակիցը:

1.18.3. Բեռնատար գնացքի կազմում 4-առանցքային պլատֆորմով և կիսավագոնով, 4-, 6-, 8-, 12- և ավել առանցքներ ունեցող փոխակրիչներով, ինչպես նաև կցման տեսակի միջանկյալ հարթակներով փոխակրիչների միջոցով կողային և ստորին ոչ եզրաչափքային 6-րդ կարգի, գերեզրաչափքային բեռների փոխադրման դրույքաչափերը յուրաքանչյուր

դեպքում համաձայնեցվում են «ՀԿԵ» ՓԲԸ-ի հետ և սահմանվում են առանձին պայմանագրի հիման վրա:

1.18.4. Բեռնատար գնացքի կազմում ոչ եզրաչափային բեռները 4-, 6-, 8-, 12- և ավել առանցքներ ունեցող փոխակրիչներով փոխադրման ժամանակ, բացառությամբ նշված սույն Սակագնային Քաղաքականության 1.18.1. կետում (բացի կողային և ստորին 6-րդ կարգի, ինչպես նաև 3-րդ կարգից ավել վերին ոչ եզրաչափային և գերեզրաչափային բեռների), փոխադրավարձը հաշվարկվում է սույն Սակագնային Քաղաքականության 2.1 կետի համաձայն, հաշվարկային զանգվածի դիմաց, բայց ոչ պակաս, քան 5 տոննա փոխակրիչի յուրաքանչյուր առանցքի համար (այսինքն 20 տոննա՝ 4-առանցքային, 30 տոննա՝ 6-առանցքային փոխակրիչի համար և այլն)՝ կիրառելով 3,0 գործակիցը:

1.18.5. Վագոնում միաժամանակ եզրաչափային և ոչ եզրաչափային կամ միաժամանակ արտաչափի մի քանի կարգ ունեցող բեռների փոխադրման դեպքում փոխադրավարձը հաշվարկվում է որպես արտաչափային բեռի փոխադրման համար, որն ունի արտաչափի ավելի բարձր կարգ:

1.18.6. Երկու և երկուսից ավել վագոնների վրա բեռնված երկարաչափ բեռների փոխադրման դեպքում, փոխադրավարձը հաշվարկվում է սցեպ վագոններից յուրաքանչյուրի համար վճարների գումարմամբ՝ սույն Սակագնային Քաղաքականության Հավելված №1-ում նշված դրույքներով: Եթե փոխադրման փաստաթղթերում նշված չէ յուրաքանչյուր սցեպ վագոնում բեռի զանգվածը, առաքման ընդհանուր զանգվածը հավասար բաժանվում է սցեպ վագոնների քանակին: Յուրաքանչյուր վագոնի համար վճարը գանձվում է մեկ վագոնի առաքման հաշվարկային զանգվածի դիմաց:

1.19. Եթե բեռնափոխադրումը կատարվել է առանց սակագնի նախնական համաձայնեցման, ապա փոխադրավարձը գանձվում է Երկաթուղու կողմից հաշվարկված գումարի չափով:

1.20. Մասնավոր /փոխադրողին չպատկանող/ բեռնատար վագոններով բեռների փոխադրման համար վարձը հաշվարկվում է սույն Սակագնային Քաղաքականության ընդհանուր դրույքների հիման վրա՝ 0,85 գործակցի կիրառմամբ, մասնավոր սառնարանային սեկցիաներով բեռների փոխադրավարձը հաշվարկվում է սույն Սակագնային Քաղաքականության ընդհանուր դրույքների հիման վրա՝ 0,70 գործակցի կիրառմամբ:

1.21. Իզոթերմիկ վագոնով կամ վագոն-թերմոսով բեռի փոխադրման դեպքում (բացառությամբ՝ արագ փչացող բեռի), եթե իզոթերմիկ վագոնը կամ վագոն-թերմոսը տրամադրվել է բեռն ուղարկողի հայտով նախատեսված փակ վագոնի փոխարեն (բեռնագրում կատարելով՝ «BTBK» - «Վագոն-թերմոս փակ վագոնի փոխարեն» նշում), փոխադրավարձը հաշվարկվում է համապիտանի շարժակազմի համար նախատեսված կանոն-

ներով, առաքման հաշվարկային զանգվածի դիմաց, սակայն 60 տոննայից ոչ պակաս չափով: Տվյալ փոխարինումը պետք է համաձայնեցվի փոխադրողի հետ:

Եթե փոխադրողի կողմից վազոն-թերմոսը տրամադրվել է բեռն ուղարկողի հայտի համաձայն ոչ փչացող բեռների փոխադրման համար, ապա փոխադրավճարը հաշվարկվում է սույն Սակագնային Քաղաքականության կանոնների համաձայն՝ գործող փչացող բեռների փոխադրման համար՝ որպես շուտ փչացող բեռ՝ սույն Սակագնային քաղաքականության Հավելված №3-ի դրույքներով:

#### 1.22. Վտանգավոր բեռների փոխադրում

Վտանգավոր բեռների բեռնափոխադրումը իրականացվում է ԱՊՀ անդամ-պետությունների երկաթուղային տրանսպորտի Խորհրդի կողմից 1996թ. ապրիլի 5-ին տեղի ունեցած 15-րդ նիստում հաստատված «Երկաթուղային տրանսպորտով վտանգավոր բեռների փոխադրման կանոնների» համաձայն, և ԱՊՀ անդամ-պետությունների երկաթուղային տրանսպորտի Խորհրդի կողմից 2009թ. մայիսի 22-ին տեղի ունեցած 50-րդ նիստում հաստատված «Վազոն-զլանատակառներով հեղուկ բեռների և բունկերային տիպի վազոններով նավթաբիտումի բեռնափոխադրման կանոնների» համաձայն:

1.22.1. Հետևյալ դասերին պատկանող. 1 դասի՝ «Պայթուցիկ նյութեր և արտադրանք», 5.2. դասի՝ «Օրգանական պերօքսիդներ» (ՄԱԿ համարներ՝ 3101-3110), 6.2. դասի՝ «Վարակիչ նյութեր», 7 դասի՝ «Ռադիոակտիվ նյութեր» վտանգավոր բեռների և սույն Սակագնային Քաղաքականության Հավելված №8 բերված վտանգավոր բեռների փոխադրման համար փոխադրավճարը հաշվարկվում է՝

- գույքային համակազմի վազոններով (փոխադրողին պատկանող) (բացի գլանատակառից և բունկերային կիսավազոններից) Հավելված №1-ում սահմանված դրույքներով, կիրառելով 2,0 գործակիցը, մասնավոր (փոխադրողին չպատկանող) վազոններով փոխադրման դեպքում՝ ի լրումն վերոնշյալ գործակցին, կիրառվում է 0,85 գործակիցը,

- գույքային համակազմի /փոխադրողին պատկանող/ գլանատակառով և բունկերային կիսավազոններով՝ Հավելված №2-ում սահմանված դրույքներով, կիրառելով 2,0 գործակիցը, մասնավոր (փոխադրողին չպատկանող) վազոններով փոխադրման դեպքում՝ ի լրումն վերոնշյալ գործակցին, կիրառվում է 0,85 գործակիցը,

- գույքային համակազմի /փոխադրողին պատկանող/ վազոններով բեռնարկերի փոխադրման դեպքում՝ Հավելված №4-ում սահմանված դրույքներով՝ գլանատակառների համապատասխան կարգի համար, համաձայն սույն Սակագնային Քաղաքականության 1.15. կետի, կիրառելով 2,0 գործակիցը, մասնավոր (փոխադրողին չպատկանող) վազոններով փոխադրման դեպքում՝ ի լրումն վերոնշյալ գործակցին, կիրառվում է 0,85 գործակիցը,

1.22.2. Սույն Սակագնային Քաղաքականության 1.22.1 կետում չնշված վտանգավոր բեռների փոխադրավճարը հաշվարկվում է սույն Սակագնային Քաղաքականության ընդհանուր դրույթների հիման վրա:

1.23. Որպես պատասպարան օգտագործվող դատարկ վագոնի կամ հսկիչ փեղկով դատարկ վագոնի փոխադրավարձը հաշվարկվում է՝

- գույքային համակազմի (փոխադրողին պատկանող) վագոնների համար՝ 1 առանցք-կմ դիմաց 0,35 շվ. ֆր. դրույքով,

- մասնավոր (փոխադրողին չպատկանող) վագոնների համար՝ 1 առանցք-կմ դիմաց 0,30 շվ. ֆր. դրույքով:

Եթե բեռնված վագոնը օգտագործվում է հսկիչ փեղկի տեղադրման համար, ապա փոխադրավարձը հաշվարկվում է ըստ փոխադրվող բեռի համար գործող սույն Սակագնային Քաղաքականության կանոնների՝ առաքման ընդհանուր զանգվածի համար 2,00 գործակցի կիրառմամբ:

1.24. «ՀԿԵ» ՓԲԸ սեփական կարիքների համար բեռների, այդ թվում լոկոմոտիվների, բեռնամբարձիչների, էլեկտրասեկցիաների, էլեկտրակայանների, այլ ռելսային շարժակազմի և երկաթուղով շարժվող այլ սարքավորումների, ինչպես նաև ծառայողական, հատուկ վագոնների, նորոգման/նորոգումից գույքային համակազմի բեռնատար վագոնների և բեռնարկղերի փոխադրման դիմաց վճարումն իրականացվում է «ՀԿԵ» ՓԲԸ-ի կողմից սահմանված կարգով:

1.25. Առանձին լոկոմոտիվով բեռի փոխադրման դրույքաչափը սահմանվում է ըստ փոխադրման կանոնների՝ առանձին պայմանագրի հիման վրա:

1.26. Բեռնատար գնացքների կազմում ուղևորատար վագոններում բեռների փոխադրման համար վճարը հաշվարկվում է սույն Սակագնային Քաղաքականության կանոնների համաձայն՝ բեռի հաշվարկային զանգվածի 25 տոննա քաշային կարգի համար, բայց ոչ պակաս, քան 66 տոննա:

Կազմավորված զինվորական էշելոնների կազմում մարդատար վագոնների փոխադրման համար դրույքը սահմանվում է առանձին պայմանագրով:

1.27. «ՀԿԵ» ՓԲԸ-ն, ելնելով իր տնտեսական շահերից, ինքնուրույն է որոշում սակագնի արտարժույթով կամ այլ արժույթով սահմանված փոխադրումների դրույքաչափերի և լրացուցիչ վճարների դրույքաչափերի պայմանագրային զեղչերի չափը և նախատեսում է ստանձնած պարտավորությունների չկատարման համար ֆինանսական պատասխանատվության մեխանիզմ:

1.28. Բեռների փոխադրման ծառայությունների մատուցման վճարն իրականացվում է ամբողջ ծավալով՝ 100 տոկոս կանխավճարի տեսքով ծառայությունների մատուցումը սկսելու օրվանից ոչ ուշ, քան 3 (երեք) օրացուցային օր առաջ, եթե այլ բան նախատեսված չէ կողմերի համաձայնությամբ կամ «ՀԿԵ» ՓԲԸ այլ նորմատիվ փաստաթղթերով:

## Բաժին 2.

### Բեռների փոխադրման

### սակագնային դրույքների և փոխադրավճարների հաշվարկի կարգ

Վազոնով բեռի փոխադրում

Համապիտանի վազոնով, նավթամթերքի գլանատակառով, բունկերային կիսավազոններով, մասնագիտացված վազոնով բեռներ փոխադրելիս՝ փոխադրման կոնկրետ հեռավորության համար բազային դրույքը հաշվարկվում է ՄՏՍ (Միջազգային Երկաթուղային Տարանցիկ Սակագին) սակագներով, ըստ բանաձևի՝

մինչև 200 կմ ներառյալ՝

$$\text{Մբազ} = \text{Մմտս} \cdot \text{Հգ} \cdot \text{Ուգ}$$

200 կմ ավելին՝

$$\text{Մբազ} = (\text{Մմտս } \Phi\text{ր} + (\text{Մմտս} - \text{Մմտս } \Phi\text{ր}) \cdot \text{Հգ}) \cdot \text{Ուգ},$$

- դրսեղ՝ Մմտս Ֆր** - ՄՏՍ համապատասխան կշռային կարգի համար ՄՏՍ սակագնի բազային դրույք (25 տ ավել վազոնի բեռնման դեպքում՝ 25տ կշռային կարգի համար ՄՏՍ դրույք) ամրագրված հեռավորության վրա (սակագնային գոտի՝ 191-200 կմ), որից հետո կիրառվում է Հգ, շվ. Ֆր. բեռի 1 տոննայի դիմաց,
- Մմտս** - ՄՏՍ համապատասխան կշռային կարգի համար ՄՏՍ դրույք (25 տ ավել վազոնի բեռնման դեպքում՝ 25 տ կշռային կարգի համար ՄՏՍ դրույք) փոխադրման կոնկրետ հեռավորությունների վրա՝ շվ. Ֆր. բեռի 1 տոննայի դիմաց,
- Հգ** - Հեռավորության գործակից (մինչև 200 կմ ներառյալ՝ Հգ=1,0, 200 կմ գերազանցող հեռավորության դեպքում համապիտանի վազոնի և մասնագիտացված վազոնի համար, բացառությամբ վազոնների, որոնց սակագնային դրույքները նշված են սույն Սակագնային Քաղաքականության №2, 3 Հավելվածներում: Հգ=0,68, նավթամթերքային գլանատակառի և բունկերային կիսավազոնների համար՝ Հգ=0,50):
- Ուգ** - Ուղղիչ գործակից՝ վազոնի 25 տոննայից ավել բեռնման դեպքում: Նավթամթերքային գլանատակառի և

բունկերային կիսավազոնների համար՝  $\mathcal{C}_q=1$ :

Գլանատակառ-վազոններով բեռների փոխադրման դեպքում, բացառությամբ նավթաբենզինային գլանատակառների և բունկերային կիսավազոնների, կոնկրետ տարանցիկ հեռավորության համար հաշվարկվում է բանաձևով՝

$$U_{բազ} = U_{մու} \cdot \mathcal{Q}_{բ},$$

որտեղ՝  $U_{մու}$ ՝ 25 տոննա կշռային կարգի համար  $USU$  դրույք կոնկրետ հեռավորության վրա, շվ. Տր. բեռի 1 տոննայի դիմաց,  
 $\mathcal{Q}_{բ}$ ՝ գործակից բեռի համար

Տվյալ եղանակով հաշվարկված բազային դրույքները կլորացվում են մինչև ամբողջ սանտիմր:

Հաշվարկված բազային դրույքի նկատմամբ կիրառվում են սահմանվող եռամսյակային կամ ամենամսյա շտկիչ գործակիցներ, համապատասխան փոփոխությունը ուժի մեջ մտնելուց ոչ ուշ, քան հաշվետու ամսվա կամ եռամսյակի սկզբից 15 օր առաջ: Վերջնական հաշվարկած դրույքը կրկնակի անգամ կլորացվում է մինչև ամբողջ սանտիմր:

2.1. Համապիտանի վազոնով բեռի փոխադրման համար վճարը հաշվարկվում է՝ բազմապատկելով Հավելված №1-ում նշված դրույքը առաքման հաշվարկային զանգվածի (ըստ սույն Սակագնային Քաղաքականության 1.13. կետի):

2.2. Գլանատակառով բեռի փոխադրման համար վճարը հաշվարկվում է՝ բազմապատկելով Հավելված №2-ում նշված դրույքը առաքման հաշվարկային զանգվածի (ըստ սույն Սակագնային Քաղաքականության 1.13. կետի):

2.3. Սառնարանային վազոնում (ԻՄՎ՝ ինքնավար սառնարանային վազոն, սառնարանային սեկցիաներ, թերմոս-վազոններ) արագ փչացող բեռների փոխադրման համար փոխադրավարձը հաշվարկվում է սույն Սակագնային Քաղաքականության Հավելված №3-ի սակագներով: Սառնարանային սեկցիայի կազմում գույքային համակազմի (փոխադրողին պատկանող) կամ մասնավոր (փոխադրողին չպատկանող) դիզելային-էլեկտրակայան վազոնի, սպասարկող անձնակազմի հետ միասին, փոխադրման համար փոխադրավարձը ներառված է բեռի փոխադրման սակագնում և լրացուցիչ չի հաշվարկվում:

2.3.1. Եթե բեռի սեփականատիրոջ հայտով արագ փչացող բեռի փոխադրման համար տրամադրվում է դիզել-գեներատորային և 1, 2, 3 բեռնատար վազոններից ձևավորված սառնարանային սեկցիա, բեռնված վազոնում բեռների փոխադրավարձը հաշվարկվում է սույն Սակագնային Քաղաքականության Հավելված №3-ի սակագներով՝ կիրառելով համապատասխանաբար 1,7; 1,4; 1,1 գործակիցները:

2.3.2. Եթե բեռ ուղարկողի հայտի համաձայն արագ փչացող բեռների փոխադրման համար տրամադրվել է սառնարանային սեկցիա՝ կազմած մեկ դիզելային-գեներատորից, 5 և ավել գույքային համակազմի /փոխադրողին պատկանող/ բեռնային վագոններից, բեռների փոխադրավարձը հաշվարկվում է սույն Սակագնային Քաղաքականության Հավելված №3-ի սակագներով՝ կիրառելով 0,85 գործակիցը, եթե սեկցիաները կազմված են 5-ից ոչ պակաս բեռնված վագոններ:

2.4. Սառնարանային սեկցիայի կազմում մասնավոր (փոխադրողին չպատկանող) բեռնված և դատարկ դիզել-գեներատորային վագոնի փոխադրման համար վճարը սահմանվում է 1 առանցք-կմ դիմաց 0,12 շվ. ֆր. դրույքով: Տվյալ վագոնում սառնարանային սեկցիայի սպասարկման անձնակազմի երթևեկության դիմաց վճարը առանձին չի գանձվում:

Բեռնված սառնարանային սեկցիայի կազմում դատարկ վագոնի փոխադրավարձը՝ անկախ պատկանելիությունից, սահմանվում է 1 առանցք-կմ դիմաց 0,10 շվ. ֆր. դրույքով:

2.5. Բեռնատար գնացքի կազմում շարժակազմի փոխադրավարձը միջազգային և ներհանրապետական հաղորդակցությունում (վագոններ, լոկոմոտիվներ, երկաթուղային ամբարձիչներ, վագոնային կշեռքի ստուգիչ վագոններ և այլն՝ ԲՆԱ 8601-8606, 99211000, 99212000, 99214000, 99221000, 99222000, 99224000 տեսակ) հաշվարկվում է համապիտանի գույքային համակազմի (փոխադրողին պատկանող) վագոններով բեռների փոխադրման մասով սույն Սակագնային Քաղաքականության կանոններով, համաձայն սույն Սակագնային Քաղաքականության 2.1. կետի՝ կիրառելով 0,50 գործակիցը:

Շարժակազմի յուրաքանչյուր միավորը համարվում է առանձին առաքում, իսկ այդ միավորի սեփական զանգվածը՝ առաքման զանգված:

Նշված կետի գործողությունը չի վերաբերվում գույքային համակազմի (փոխադրողին պատկանող) դատարկ վագոնների, ինչպես նաև սույն Սակագնային Քաղաքականության 2.7. կետում նշված մասնավոր (փոխադրողին չպատկանող) դատարկ վագոնների փոխադրմանը:

2.6. Շարժակազմի փոխադրավարձը (վագոններ, լոկոմոտիվներ, երկաթուղային ամբարձիչներ, վագոնային կշեռքի ստուգիչ վագոններ և այլն՝ ԲՆԱ 8601-8606, 99211000, 99212000, 99214000, 99221000, 99222000, 99224000 տեսակ)՝ առանձին լոկոմոտիվով տեղափոխելու դեպքում, սահմանվում է Երկաթուղու կողմից առանձին պայմանագրով:

2.7. Փոխադրման ամբողջական փաստաթղթերով դատարկ վիճակում բեռնաթափումից, բեռի ու բեռնարկղերի բեռնավորման ուղարկված մասնավոր (փոխադրողին չպատկանող) վագոնների, այդ թվում նաև մաքրման, լվացման, ախտահանման, մաքրումից, լվացումից, ախտահանումից հետո տեղափոխվող վագոնների փոխադրավարձը (ԲՆԱ ծածկագրեր՝ 99210000, 99213000, 99220000, 99223000) հաշվարկվում է 1 առանցք-կմ դիմաց 0,10 շվ. ֆր. դրույքով:

2.8. Այլ պետության Երկաթուղային վարչության /Երկաթուղու/ կողմից ստացված հայտին համապատասխան՝ ոչ եզրաչափային, ծանրաքաշ և երկարաչափ բեռի փոխադրման համար /փոխադրողին պատկանող/ գույքային համակազմի դատարկ սարքին փոխակրիչի առաքումը այլ պետության Երկաթուղային վարչություն /Երկաթուղի/, ինչպես նաև սեփականատեր-Երկաթուղային վարչությունում /Երկաթուղում/ բեռնաթափելուց հետո դատարկ վիճակում այդ փոխակրիչի վերադարձը իրականացվում է ՄԲՀՀ-ի բեռնագրով և փոխադրման գործընթացում մասնակցող Սակագնային Համաձայնագրի մասնակիցների երկաթուղիների բոլոր գծերով փոխադրման դիմաց փոխադրավճարի վճարմամբ:

Եթե գույքային համակազմի /փոխադրողին պատկանող/ փոխակրիչով բեռը փոխադրվում է փոխակրիչի սեփականատեր-Երկաթուղային վարչությունից /Երկաթուղուց/ այլ պետության երկաթուղի կամ բեռով փոխադրողին պատկանող գույքային համակազմի առաքվող փոխակրիչի բեռով բարձումը իրականացվում է փոխակրիչի սեփականատեր-Երկաթուղային վարչություն /Երկաթուղի/, ապա բեռնաթափումից հետո փոխակրիչի վերադարձը կամ բեռնման համար փոխակրիչի առաքումը իրականացվում է ԴՄ-27 ՏՈ ձևի բեռնագրով /пересылочная накладная/՝ առանց փոխադրավճարների գանձման:

2.9. Անկախ պատկանելիությունից, բեռնատար գնացքի կազմում երթևեկող դատարկ փոխակրիչի (տրանսպորտյոր) փոխադրման դիմաց վճարների հաշվարկը կատարվում է ոչ եզրաչափային բեռների փոխադրման համար սահմանված կարգով որոշվող սակագնային հեռավորության՝ կախված փոխակրիչի առանցքների քանակից՝

- 4-առանցքային փոխակրիչ՝ 1 առանցք/կմ համար 0,12 շվեց. ֆրանկ,
- 6-8-առանցքային փոխակրիչ՝ 1 առանցք/կմ համար 0,23 շվեց. ֆրանկ,
- 12-20-առանցքային փոխակրիչ՝ 1 առանցք/կմ համար 0,35 շվեց. ֆրանկ,
- 20-ից ավել առանցքային փոխակրիչ՝ 1 առանցք/կմ համար 0,40 շվեց. ֆրանկ:

Առանձին լոկոմոտիվով (ТЧ-500К, ТЧ-400, ТЧ-300М) հողակապած տեսակի դատարկ փոխակրիչի փոխադրման համար վճարը սահմանվում է Երկաթուղային վարչությունների /Երկաթուղիների/ կողմից՝ յուրաքանչյուր կոնկրետ դեպքի համար, նման փոխադրումը համաձայնեցնելու շրջանակներում:

Ուղեկցող բրիգադի կողմից փոխակրիչի տեխնիկական սպասարկման համար վճարը և հատուկ վագոնի պահպանման ծախսերը գանձվում են ըստ փոխակրիչի

ձեռնարկություն-պատվիրատույի և դեպոյի կամ փոխակրիչի հաշվառման երկաթուղու միջև կնքված առանձին պայմանագրի:

2.9.1. Առանձին լոկոմոտիվով դատարկ փոխակրիչի փոխադրման դիմաց վճարը սահմանվում է երկաթուղու կողմից առանձին պայմանագրով:

2.10. Բեռների հետ ուղեկցորդների երթևեկության համար վճարը հաշվարկվում է երթևեկողների փաստացի քանակի՝ սկսած 100 կմ դիմաց 12,00 շվ. ֆր. դրույքով: Ընդ որում, ոչ լրիվ 100 կմ-ը հաշվարկվում է որպես լրիվ 100 կմ:

2.10.1. Առանձին վագոնով՝ առանց բեռի, ուղեկցորդների երթևեկության դեպքում ուղեվարձից բացի լրացուցիչ գանձվում է վագոնի փոխադրման համար վճար, հաշվարկված հետևյալ դրույքաչափով՝

- գույքային համակազմի (փոխադրողին պատկանող) բեռնատար վագոնի համար՝ 1 առանցք-կմ դիմաց 0,23 շվ. ֆր.,

- մասնավոր (փոխադրողին չպատկանող) վագոնի համար՝ 1 առանցք-կմ դիմաց 0,20 շվ. ֆր.,

- սեփական կամ վարձակալած ուղևորատար վագոնի համար՝ անկախ դրա տեսակից (կարգից)՝ 1 առանցք-կմ դիմաց 0,30 շվ. ֆր.,

- գույքային համակազմի (փոխադրողին պատկանող) ուղևորատար վագոնի համար՝ 1 առանցք-կմ դիմաց 0,35 շվ. ֆր.:

2.11. Միջազգային հաղորդակցությունում բեռների վերահասցեագրման, և այն դեպքերում, երբ բեռը ստացողի կողմից փոխադրման փաստաթղթերը դուրս են գրված, բայց բեռը ստացողին չի հանձնված, այդ թվում նաև նոր փաստաթղթերով, բեռնափոխադրման վճարների հաշվարկը և գանձումը կատարվում է համաձայն սույն Սակագնային Քաղաքականության միջազգային փոխադրման կանոնների:

2.12. Մեկ ուղարկողից մեկ ստացողի հասցեով սահմանված քաշի և/կամ երկարության գնացքի կազմում բեռների փոխադրավարձի հաշվարկն իրականացվում է սույն Սակագնային Քաղաքականության կանոններով՝ կիրառելով 0,95 շտկիչ գործակիցը: Շտկիչ գործակցի կիրառումն իրականացվում է առանձին կնքված պայմանագրի հիման վրա:

2.13. «ՀԿԵ» ՓԲԸ տարածքով /փոխադրումներ միջազգային հաղորդակցությունում/ Փոթի նավահանգստի հացահատիկային տերմինալներով դեպի Հայաստանի Հանրապետություն նշանակումով հացահատիկային բեռների /ԱԽԲ 1001-1008/ ցորեն, աշորա, գարի, վարսակ, եգիպտացորեն, բրինձ, հացահատիկային սորգո, հնդկացորեն, կորեկ, դեղձանի սերմեր և քուսպի /ԱԽԲ 2304; 2306/ փոխադրավարձը հաշվարկվում է հետևյալ դրույքաչափով – 0,036 ԱՄՆ դոլար1 տոննա\*կմ-ի համար:

2.14. «ՀԿԵ» ՓԲԸ տարածքով /փոխադրումներ միջազգային հաղորդակցությունում/ Փոթի նավահանգստի տերմինալներով դեպի Հայաստանի Հանրապետություն նշանակումով շաքարեղեգի, շաքարի հումքի բեռի /ԱԽԲ 17011/ փոխադրավարձը հաշվարկվում է հետևյալ դրույքաչափով – 0,059 ԱՄՆ դոլար1 տոննա\*կմ-ի համար:

2.15. «ՀԿԵ» ՓԲԸ տարածքով /փոխադրումներ միջազգային հաղորդակցությունում/ դեպի Հայաստանի Հանրապետություն նշանակումով ցեմենտի /ԱԽԲ 25232/ և ցեմենտի կլինկերի բեռների /ԱԽԲ 25231/ փոխադրավարձը հաշվարկվում է հետևյալ դրույքաչափով – 0,058 ԱՄՆ դոլար1 տոննա\*կմ-ի համար:

2.16. Ադրբեջանի Հանրապետության, Վրաստանի տարածքով Հայաստանի Հանրապետություն ներմուծված ցորենի և մեսլինի, տարեկանի, գարու, վարսակի, եգիպտացորենի, բրնձի, հացահատիկի սորգոյի, հնդկաձավարի, կորեկի և փայլխոտի սերմերի հացահատիկային բեռների (ԲՆԱ 1001-1008), ինչպես նաև քուսպի (ԲՆԱ 2304, 2306) փոխադրման վճարը ներկրման հաղորդակցությունում հաշվարկվում է 0,036 ԱՄՆ դոլար 1 տոննա\*կմ-ի համար դրույքաչափով:

2.17. 2.13-2.16 կետերում ներառյալ նկարագրված փոխադրումների համար «ՀԿԵ» ՓԲԸ սակագնային քաղաքականությունով նախատեսված այլ գործակիցներ չեն կիրառվում՝ բացառությամբ «ՀԿԵ» ՓԲԸ սակագնային քաղաքականության 1.20 կետի գործակիցներից՝ փոխադրման պայմանները 1.20 կետին համապատասխանելու դեպքում:

2.18. Կովկաս-Փոթի-Կովկաս երկաթուղային լաստանավային հաղորդակցության միջոցով միջազգային հաղորդակցությունում բեռների փոխադրավարձի հաշվարկն իրականացվում է սույն Սակագնային Քաղաքականության կանոններով՝ կիրառելով 0,8 շտկիչ գործակիցը:

2.19. Սակագնային Քաղաքականությամբ չկանոնակարգված բեռների փոխադրման համար այլ վճարները և լրացուցիչ ծառայությունների մատուցման համար գանձումները հաշվարկվում են ԱՊՀ Սակագնային Քաղաքականության ընդհանուր կանոնների և Երկաթուղային վարչության կողմից սահմանված կարգի հիման վրա:

### **Բաժին 3**

#### **Ծավալային սակագների ճշգրտման գործակիցներ և արտոնությունների տրամադրում բեռների երաշխավորված ծավալի փոխադրման ժամանակ**

3.1. «ՀԿԵ» ՓԲԸ ենթակառուցվածքներով բեռնափոխադրումների համար ծավալային սակագները, հաշվի առնելով ճշգրտող գործակիցները, կարող են տրամադրվել «ՀԿԵ» ՓԲԸ-ի և հաճախորդի միջև կնքված համաձայնագրերի հիման վրա,

3.2. Ծավալային սակագները, հաշվի առնելով բեռնափոխադրումների ճշգրտման գործակիցները, կարող են տրամադրվել փոխադրումների համաձայնեցված ծավալի

համար, ճշգրտող գործակիցների կիրառումն սկսելու օրվանից, հաճախորդի կողմից բանկային երաշխիքի, ակրեդիտիվի կամ «ՀԿԵ» ՓԲԸ-ի համար ընդունելի այլ երաշխիքների տրամադրման դեպքում՝ ապահովելով փոխադրումների համաձայնեցված ծավալի վերաբերյալ սահմանված արտոնությունները,

3.3. Հաճախորդների հետ համաձայնեցված ծավալի փոխադրման, բեռների փոխադրման վերաբերյալ համաձայնագրեր կնքելիս «ՀԿԵ» ՓԲԸ-ն իրավունք ունի համաձայնագրում սահմանել լրացուցիչ պայմաններ, որոնք տարբերվում են Սակագնային քաղաքականությամբ հաստատված բեռնափոխադրման վճարների և կայանային վճարների հաշվարկման կանոններից:

3.4. Շաքարավազ բեռի (ԳՆԳ 17019) բեռնափոխադրման ժամանակ տեղական հաղորդակցությունում մեկ բեռնափոխադրողի բեռնափոխադրման վճարը հաշվարկելիս կիրառվում են հետևյալ ճշգրտման գործակիցները՝

- 5 000 տն սկզբնական ծավալի համար –1,0,
- 5 000 տն-ին հաջորդող 2 000 տն ծավալի համար – 0,9,
- 7 000 տն-ին հաջորդող 2 000 տն ծավալի համար – 0,85,
- 9 000 տն-ին հաջորդող 2 000 տն ծավալի համար – 0,8,
- 11 000 տն-ին հաջորդող ողջ ծավալի համար – 0,75:

#### **Բաժին 4.**

##### **Լրացուցիչ գանձումներ**

Լրացուցիչ գանձումները՝ Հարավկովկասյան երկաթուղով բեռնափոխադրումների կազմակերպման հետ կապված աշխատանքների և ծառայությունների դիմաց, հաշվարկվում են «Բեռնափոխադրումների կազմակերպման ժամանակ «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ի կողմից իրականացվող գանձումների, մատուցվող աշխատանքների և ծառայությունների գնացուցակ» Հավելված №11-ում նշված, փաստաթղթի ձևակերպման օրվա դրությամբ գործող դրույքներով և կանոններով:

Բոլոր լրացուցիչ գանձումների նկատմամբ հաշվարկվում է Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված Ավելացված արժեքի հարկ:

Լրացուցիչ գանձումները հաշվարկվում են դրամով:

ՄԱԿԱԳՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔՆԵՐԸ համապիտանի վազոնով բեռի փոխադրումների համար

(1 տոննայի դիմաց շվեյցարական ֆրանկով)

Վազոնի բեռնում											
կմ.-ով	մինչև 12 տոննա	13-16 տոննա	17-23 տոննա	24-26 տոննա	27-31 տոննա	32-36 տոննա	37-40 տոննա	41-46 տոննա	47-51 տոննա	52-55 տոննա	56 և ավելի տոննա
50	9,57	7,94	6,42	6,09	5,66	5,05	4,57	4,14	3,84	3,59	3,35
51-60	11,64	9,68	7,83	7,40	6,88	6,14	5,55	5,03	4,66	4,37	4,07
61-70	13,82	11,53	9,25	8,70	8,09	7,22	6,53	5,92	5,48	5,13	4,79
71-80	15,88	13,27	10,66	10,12	9,41	8,40	7,59	6,88	6,38	5,97	5,57
81-90	18,06	15,01	12,08	11,42	10,62	9,48	8,57	7,77	7,19	6,74	6,28
91-100	20,13	16,76	13,49	12,73	11,84	10,57	9,55	8,66	8,02	7,51	7,00
101-110	22,09	18,39	14,69	13,93	12,95	11,56	10,45	9,47	8,78	8,22	7,66
111-120	23,72	19,80	15,88	15,01	13,96	12,46	11,26	10,21	9,46	8,86	8,26
121-130	25,46	21,22	16,97	16,10	14,97	13,36	12,08	10,95	10,14	9,50	8,86
131-140	27,20	22,63	18,06	17,19	15,99	14,27	12,89	11,69	10,83	10,14	9,45
141-150	28,83	24,04	19,26	18,28	17,00	15,17	13,71	12,43	11,52	10,79	10,05
151-160	30,57	25,46	20,35	19,37	18,01	16,08	14,53	13,17	12,20	11,43	10,65
161-170	32,20	26,87	21,54	20,45	19,02	16,97	15,34	13,91	12,88	12,07	11,25
171-180	33,95	28,29	22,63	21,54	20,03	17,88	16,16	14,65	13,57	12,71	11,85
181-190	35,69	29,70	23,72	22,52	20,94	18,69	16,89	15,31	14,19	13,29	12,39
191-200	37,32	31,12	24,92	23,61	21,96	19,60	17,71	16,05	14,87	13,93	12,99
201-210	38,50	32,08	25,65	24,35	22,65	20,21	18,26	16,56	15,34	14,37	13,39
211-220	39,76	33,11	26,47	25,16	23,40	20,88	18,87	17,11	15,85	14,84	13,84
221-230	40,94	34,15	27,29	25,90	24,09	21,50	19,43	17,61	16,32	15,28	14,25
231-240	42,13	35,11	28,10	26,72	24,85	22,18	20,04	18,17	16,83	15,76	14,69
241-250	43,39	36,15	28,91	27,46	25,54	22,79	20,59	18,67	17,30	16,20	15,10
251-260	44,57	37,19	29,73	28,20	26,23	23,41	21,15	19,18	17,77	16,64	15,51
261-270	45,75	38,14	30,54	29,01	26,98	24,08	21,76	19,73	18,28	17,12	15,96
271-280	47,01	39,18	31,35	29,75	27,67	24,69	22,31	20,23	18,74	17,55	16,36
281-290	48,19	40,22	32,17	30,49	28,36	25,31	22,87	20,73	19,21	17,99	16,77
291-300	49,45	41,18	32,98	31,30	29,11	25,98	23,48	21,28	19,72	18,47	17,22

Վազոնի բեռնում											
կմ.-ով	մինչև 12 տոննա	13-16 տոննա	17-23 տոննա	24-26 տոննա	27-31 տոննա	32-36 տոննա	37-40 տոննա	41-46 տոննա	47-51 տոննա	52-55 տոննա	56 և ավելի տոննա
301-310	50,63	42,22	33,72	32,04	29,80	26,59	24,03	21,79	20,19	18,90	17,62
311-320	51,74	43,18	34,54	32,78	30,49	27,21	24,59	22,29	20,65	19,34	18,03
321-330	52,93	44,14	35,28	33,52	31,18	27,83	25,14	22,80	21,12	19,78	18,44
331-340	54,04	45,10	36,09	34,27	31,87	28,44	25,70	23,30	21,59	20,22	18,85
341-350	55,22	46,06	36,83	35,00	32,55	29,05	26,25	23,80	22,05	20,65	19,25
351-360	56,41	47,03	37,57	35,67	33,17	29,60	26,75	24,25	22,47	21,04	19,62
361-370	57,52	47,98	38,38	36,41	33,86	30,22	27,31	24,76	22,94	21,48	20,02
371-380	58,70	48,95	39,12	37,15	34,55	30,83	27,86	25,26	23,40	21,92	20,43
381-390	59,81	49,91	39,93	37,89	35,24	31,45	28,42	25,77	23,87	22,36	20,84
391-400	60,99	50,87	40,68	38,63	35,93	32,06	28,97	26,27	24,34	22,79	21,25
401-410	62,11	51,76	41,42	39,37	36,61	32,67	29,52	26,77	24,80	23,23	21,65
411-420	63,21	52,72	42,16	40,03	37,23	33,23	30,02	27,22	25,22	23,62	22,02
421-430	64,32	53,61	42,89	40,70	37,85	33,78	30,52	27,67	25,64	24,01	22,38
431-440	65,43	54,50	43,63	41,44	38,54	34,39	31,08	28,18	26,11	24,45	22,79
441-450	66,47	55,46	44,37	42,11	39,16	34,95	31,58	28,63	26,53	24,84	23,16
451-460	67,58	56,35	45,12	42,77	39,78	35,50	32,08	29,09	26,95	25,24	23,52
461-470	68,69	57,23	45,78	43,51	40,47	36,12	32,64	29,59	27,41	25,67	23,93
471-480	69,80	58,20	46,52	44,18	41,09	36,67	33,14	30,04	27,83	26,07	24,30
481-490	70,91	59,08	47,26	44,91	41,77	37,28	33,69	30,54	28,30	26,50	24,70
491-500	72,02	59,97	48,00	45,58	42,39	37,83	34,19	30,99	28,72	26,89	25,07
501-510	73,05	60,86	48,74	46,25	43,01	38,39	34,69	31,45	29,14	27,29	25,44
511-520	74,09	61,75	49,41	46,91	43,63	38,94	35,19	31,90	29,56	27,68	25,80
521-530	75,13	62,64	50,07	47,58	44,25	39,49	35,69	32,35	29,98	28,07	26,17

ՄԱԿԱԳՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔՆԵՐ

գլանատակառով բեռների փոխադրման, 1 տոննայի դիմաց շվեյցարական ֆրանկով

Հեռավորությունը կմ.-ով	ՄՏՄ 24-26 տոննա	Նավթամթերքների համար	Հեղուկացված գազերի էներգ. համար	Գազերի համար բացի էներգետիկ.	Ֆենոլ-սպիրտերի համար	Գլանատակառ արագ փչացող բեռների համար	Տարբեր բեռներ գլանատակառներում
50	6,09	6,09	4,26	6,09	4,57	4,26	3,65
51-60	7,40	7,40	5,18	7,40	5,55	5,18	4,44
61-70	8,70	8,70	6,09	8,70	6,53	6,09	5,22
71-80	10,12	10,12	7,08	10,12	7,59	7,08	6,07
81-90	11,42	11,42	7,99	11,42	8,57	7,99	6,85
91-100	12,73	12,73	8,91	12,73	9,55	8,91	7,64
101-110	13,93	13,93	9,75	13,93	10,45	9,75	8,36
111-120	15,01	15,01	10,51	15,01	11,26	10,51	9,01
121-130	16,10	16,10	11,27	16,10	12,08	11,27	9,66
131-140	17,19	17,19	12,03	17,19	12,89	12,03	10,31
141-150	18,28	18,28	12,80	18,28	13,71	12,80	10,97
151-160	19,37	19,37	13,56	19,37	14,53	13,56	11,62
161-170	20,45	20,45	14,32	20,45	15,34	14,32	12,27
171-180	21,54	21,54	15,08	21,54	16,16	15,08	12,92
181-190	22,52	22,52	15,76	22,52	16,89	15,76	13,51
191-200	23,61	23,61	16,53	23,61	17,71	16,53	14,17
201-210	24,70	24,16	17,29	24,70	18,53	17,29	14,82
211-220	25,89	24,75	18,12	25,89	19,42	18,12	15,53
221-230	26,98	25,30	18,89	26,98	20,24	18,89	16,19
231-240	28,18	25,90	19,73	28,18	21,14	19,73	16,91
241-250	29,27	26,44	20,49	29,27	21,95	20,49	17,56
251-260	30,36	26,99	21,25	30,36	22,77	21,25	18,22
261-270	31,55	27,58	22,09	31,55	23,66	22,09	18,93
271-280	32,64	28,13	22,85	32,64	24,48	22,85	19,58
281-290	33,73	28,67	23,61	33,73	25,30	23,61	20,24
291-300	34,92	29,27	24,44	34,92	26,19	24,44	20,95
301-310	36,01	29,81	25,21	36,01	27,01	25,21	21,61
311-320	37,10	30,36	25,97	37,10	27,83	25,97	22,26
321-330	38,19	30,90	26,73	38,19	28,64	26,73	22,91
331-340	39,28	31,45	27,50	39,28	29,46	27,50	23,57
341-350	40,36	31,99	28,25	40,36	30,27	28,25	24,22
351-360	41,34	32,48	28,94	41,34	31,01	28,94	24,80
361-370	42,43	33,02	29,70	42,43	31,82	29,70	25,46
371-380	43,52	33,57	30,46	43,52	32,64	30,46	26,11
381-390	44,61	34,11	31,23	44,61	33,46	31,23	26,77
391-400	45,70	34,66	31,99	45,70	34,28	31,99	27,42
401-410	46,78	35,20	32,75	46,78	35,09	32,75	28,07
411-420	47,76	35,69	33,43	47,76	35,82	33,43	28,66
421-430	48,74	36,18	34,12	48,74	36,56	34,12	29,24
431-440	49,83	36,72	34,88	49,83	37,37	34,88	29,90
441-450	50,81	37,21	35,57	50,81	38,11	35,57	30,49
451-460	51,79	37,70	36,25	51,79	38,84	36,25	31,07
461-470	52,88	38,25	37,02	52,88	39,66	37,02	31,73
471-480	53,86	38,74	37,70	53,86	40,40	37,70	32,32
481-490	54,94	39,28	38,46	54,94	41,21	38,46	32,96
491-500	55,92	39,77	39,14	55,92	41,94	39,14	33,55
501-510	56,90	40,26	39,83	56,90	42,68	39,83	34,14
511-520	57,88	40,75	40,52	57,88	43,41	40,52	34,73

## ՄԱԿԱԳՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔՆԵՐ

սառնարանային սեկցիաներով, ջերմապահ վազոններով, APB սառնարանային վազոնով արագ փչացող բեռների փոխադրման (1 տոննայի դիմաց շվեյցարական ֆրանկով)

Հեռավորությունը կմ.-ով	USU 17-23 տոննա	APB կամ սառնարային սեկցիա			Ջերմապահ վազոն	
		1 վազոնի դիմաց մինչև 25 տոննա բեռներու դեպքում	USU 24-26 տոննա	1 տոննայի դիմաց 25 և ավել տոննա բեռներու դեպքում	1 վազոնի դիմաց մինչև 25 տոննա բեռներու դեպքում	1 տոննայի դիմաց 25 և ավել տոննա բեռներու դեպքում
50	6,42	160,50	6,09	6,09	96,30	3,65
51-60	7,83	195,75	7,40	7,40	117,45	4,44
61-70	9,25	231,25	8,70	8,70	138,75	5,22
71-80	10,66	266,50	10,12	10,12	159,90	6,07
81-90	12,08	302,00	11,42	11,42	181,20	6,85
91-100	13,49	337,25	12,73	12,73	202,35	7,64
101-110	14,69	367,25	13,93	13,93	220,35	8,36
111-120	15,88	397,00	15,01	15,01	238,20	9,01
121-130	16,97	424,25	16,10	16,10	254,55	9,66
131-140	18,06	451,50	17,19	17,19	270,90	10,31
